

ւէ տարի կ'աճէին, պետական տուրքին զուգընթաց չարիք մը դառնալու աստիճան, քանի որ անոնց վճարումը պայմանաւոր էր հասարակաց բաշխումով), ի փառս եւ ի պատիւ հայ հաւատարմութեան.- տարագ, որ քանի մը դար եղաւ ընթացիկ, անխուսափելի բացատրութիւն հայ եւ թուրք յարաբերութիւնները լուսաւորող: Հարստահալած կազմակերպութիւններուն մէկ կարգադրութիւնն էր ասիկա, հայրենասիրական պարտականութեան ամէնուն վրայ տարածումին իբր անդրանիկ փորձ, որպէսզի հաւատարիմ հպատակ հայը ամրապնդուէր խոր իր յարգանքին մէջ «գամ մը եւս», զոր պարտական էր տածել մեր ցեղը հանդէպ օսմանեան փառապանծ եւ բարեգործով գահուն: Ո՛վ մեր գերութիւնը. քեզ ինչպէ՛ս մոռնալ: Դուն ջարդերուն չափ ուժով ես իբր պատկեր, իբր քանդակ՝ մեր հոգիէն ներս ու անոնցմէ աւելի կսկըծագին, վասնզի անյաղթ կը մնաս ժամանակէն ու միջոցէն, ու կը կազմես մեր մտքին խորագոյն դժբախտութիւնը, կազմեր ես դարերով: Գիւղապետը, այդ աստուածավախ, իր ժամուն, օճախին, աւանդութեանց պատկառուն, բժախնդիր, ատեն մը չէր յօժարած հաւատարմութեան այս ցոյցին ու «ներքեւ ձեռաց» կարգադրեր էր քանի մը տարի այս անտանելի զուլումը Ֆախիր Փուխարայի, մինչեւ որ նախանձորդի մը կողմէ մատնուած, ստացաւ խիստ ազդարարութիւն, յարգելու կառավարական հրահանգները, ու ծռեց գլուխ, մեղանչելով օճախին դէմ: Օտան<sup>(\*)</sup>, որ այդ օրերու գեղի կեանքին ամէնէն

---

(\*) Այդ անունը կը տրուէր գիւղերու մէջ այն բնակարաններուն, որոնք սեփականութիւնն են գեղի համայնքին, աղբիւրին, մատուռին, վանքին, ճամբին, գերեզմանատան սենեակին նման: Գիւղացիք հերթով, յանձնառու էին հոն գիշերուան մը համար հիւրընկալել ճամբորդը, իրենց սեղանէն հանելով բաժինը ճամբորդներու սպասին: Թուրքերուն՝ ինչպէս քրիստոնեային սիրելի այս թերեւս շատ վաղնջաւոր աւանդութիւնը մինչեւ Առաջին մեծ Պատերազմը զանազան տեղեր տակաւին կը յարգուէր: Նիկիոյ շրջանի հայ գիւղերը կառավարական կարգադրութեամբ փակուեցան, կարելի մուզիր (վնասարար) անձնաւորութիւնները պատասպարելէ արգելելու համար: